ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

հեռ.098443308 тел.098443308

էլ.հասցե. arevashatgyux@mail.ru

թիվ __80__

« 30» ___03___2021թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ի լրումն մեր 25.03.2021 թվականի թիվ 76 գրությանը Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ավագանու թիվ 11-Ն որոշումը:

Արևաշատ համայնքի ղեկավար /Սուսաննա Գևորգյան/

Կատարող
Աշխ. քարտուղար
Ա. Վարդանյան
+374-98-80-39-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔ Երևանյան խճուղի թիվ 16
Հեռախոս 098443308
Էլ.փոստ arcvashatgyux@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

25 մարտի 2021 թվականի թիվ 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 22 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ՝ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության 2021 թվականի մարտի 24-ի գրությունը և պետական փորձաքննության եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 30 -ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 22-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ>>՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
Աղեկյան Սամվել	---------------	---------------	---------------
Առաքելյան Արփինե	---------------	---------------	---------------
Բաբլոյան Ալիսա	---------------	---------------	---------------
Կարապետյան Ռոբերտ	---------------	---------------	---------------
Հակոբյան Արման	---------------	---------------	---------------
Ստեփանյան Ալիկ	---------------	---------------	---------------
Վարդանյան Ժիրայր	---------------	---------------	---------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ */Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

Կ. Տ.

Գ.Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅՍԻ 25-ի
ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 11-Ն ՈՐՈՇՄԱՆ

1) Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը 52821808 հազար դրամ,այդ թվում ֆոնդային բյուջե՝ 23695525.3 հազար դրամ և վարչական բյուջե՝ 29126272.7 հազար դրամ: Վարչական բյուջի տարեսկզբի ազատ մնացորդը ենթակա է ուղղման ֆոնդային բյուջե: Ընդամենը ֆոնդային բյուջե՝52821808 հազար դրամ:
2) Բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 11000.0 հազար դրամով, որից 7000.0 հազար դրամը ուղղել ֆոնդային բյուջե, իսկ 4000.0 հազար դրամը վարչական բյուջե և դրան համապատասխան ավելացնել ֆոնդային բյուջեի և վարչական բյուջեի ծախսերը՝

1/09բաժնի 01 խմբի 1դասի 5112 հոդվածը ավելացնել 57021.8 հազար դրամով
2/09բաժնի 01 խմբի 1դասի 5134 հոդվածը ավելացնել 2400,0 հազար դրամով
3/01բաժնի 01 խմբի 1դասի 5122 հոդվածը ավելացնել 400,0 հազար դրամով
4/01բաժնի 01 խմբի 1դասի 4111 հոդվածը ավելացնել 2000.0 հազար դրամով
5/01բաժնի 01 խմբի 1դասի 4112 հոդվածը ավելացնել 1000.0 հազար դրամով
6/05բաժնի 01 խմբի 1դասի 4111 հոդվածը ավելացնել 360.0 հազար դրամով
7/08բաժնի 02 խմբի 3 դասի 4111 հոդվածը ավելացնել 600,0 հազար դրամով
8/08բաժնի 02 խմբի 3դասի 4112 հոդվածը ավելացնել 40,0 հազար դրամով

Համայնքապետարանի
Աշխատակազմի քարտուղար՝ Արփենիկ Վարդանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագծի անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ նախագծի անվանման մեջ նշել հիշյալ իրավական ակտի ընդունման տարին և բնույթը:

2. Նախագծի վերնագրում և 1-ին կետում «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով, քանի որ նախագծի 1-ին կետի ենթակետերով նախատեսվում է կատարել մեկից ավելի փոփոխություններ: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

3. Նախագծի նախաբանում առաջարկում ենք հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին:

4. Նախագծի 1-ին կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 22-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ»՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների:

5. Նախագծի 2-րդ կետում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»

բառերով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների

6. Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Բացի այդ, նախագծի 1-ին կետում «փոփոխություններ՝» բառից հետո անհաժեշտ է լրացնել «համաձայն հավելվածի» բառերը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների: Այդ առումով նախագծի 1-ին կետի ենթակետերի դրույթներն անհրաժեշտ է հանել և նախատեսել հավելվածում:

7. Նախագծով նախատեսված հատվածներն անհրաժեշտ է նախատեսել հավելվածի տեսքով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների:

8. Նախագծի հիմնավորման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը, մինչդեռ տվյալ դեպքում նախագծի հիմնավորումը թերի է:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

Invalid signature

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ